ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 232-Ա 13 ապրիլի 2026 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ Մ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՈՒՄՅԱՆՑԻ ԱՆՎԱՆ N 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆԺԵԼԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ և 163-րդ հոդվածների, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-L որոշմամբ հաստատված N 4 հավելվածի 20-րդ կետի պահանջներն ու Անժելա Պետրոսյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու Մ. Մելիք-Շահումյանցի անվան N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անժելա Պետրոսյանին տրամադրել 2026 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդից մի մաս՝ 4 աշխատանքային օր, 2026 թվականի ապրիլի 27-ից 2026 թվականի ապրիլի 30-ը ներառյալ:

2. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու Մ. Մելիք-Շահումյանցի անվան N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անժելա Պետրոսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում տնօրենի լիազորությունների և պարտականությունների

կատարումը վերապահել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու Մ. Մելիք-Շահումյանցի անվան N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Արմենուհի Մկրտչյանին (առանց տնօրենի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ):

13.04.2026

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 37108406[illegible]

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք. Գավառ